ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2023 թվականի N 1581 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 2111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 14-րդ և 21-րդ մասերի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «զ» ենթակետի, 10-րդ հոդվածի պահանջներով «Վեղի ջրամբարի և ոռոգման համակարգի կառուցում» ծրագրի շրջանակներում Վեղի ջրամբարի կառուցման աշխատանքների պատշաճ իրականացման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Վեղի պատվարի և օժանդակ կառուցվածքների նախագծում և կառուցում» թիվ AFD/ICB/CW-15/001 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում կապալառու «ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝

ընկերություն) պայմանագրով նախատեսված աշխատանքների ֆինանսավորման նպատակով 2023 թվականի պետական բյուջեից (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարկերի և փոխատվությունների տրամադրում» հոդվածով) տրամադրել 1,600,000,000 (մեկ միլիարդ վեց հարյուր միլիոն) դրամ բյուջետային վարկ:

2. Ընկերության հետ կնքվելիք վարկային պայմանագրում սահմանել, որ՝

1) սույն որոշման 1-ին կետով նախատեսված բյուջետային վարկը տրվում է տասնութ ամիս մարման ժամկետով, տարեկան 6 տոկոս տոկոսադրույքով.

2) վարկի հիմնական գումարից 1,300,000,000 (մեկ միլիարդ երեք հարյուր միլիոն) դրամ գումարի մարումը կատարվում է վարկի մարման ժամկետի ավարտին, 300.000.000 (երեք հարյուր միլիոն) դրամ գումարի մարումը՝ ամսական հավասարաչափ մարումներով, տոկոսները հաշվեգրվում են վարկի մնացորդի նկատմամբ և մարվում են ամսական պարբերականությամբ՝ սկսած վարկի տրամադրման ամսվան հաջորդող ամսվանից.

3) որպես վարկային պարտավորության ապահովման միջոց ընդունվում է անշարժ գույքի գրավը՝ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ քաղ. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Ծիծեռնակաբերդի խճուղի 39/1 հասցեում գտնվող հողամասը, որի շուկայական արժեքը, համաձայն «ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ ՎՄ-30/3541 գնահատման հաշվետվության, 2023 թվականի օգոստոսի 25-ի դրությամբ կազմում է 2 083 300 000 (երկու միլիարդ ութսուներեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ, լիկվիդացիոն արժեքը՝ 1 666 640 000 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունվեց միլիոն վեց հարյուր քառասուն հազար) դրամ, գրավի պայմանագրի կնքման և գրավի իրավունքի գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են ֆինանսավորման ընկերության կողմից.

4) սույն որոշման 1-ին կետով նախատեսված բյուջետային վարկը փոխանցվում է գանձապետարանում այդ նպատակով բացված արտաբյուջետային հաշվին, որից վարկի գծով մասհանումները կատարվում են ընկերության հայտի հիման վրա: Ընդ որում, յուրաքանչյուր մասհանման նպատակի համապատասխանությունը սույն որոշման 1-ին կետի պայմաններին նախապես հավաստվում է «Վեդի պատվարի և

օժանդակ կառուցվածքների նախագծում և կառուցում» թիվ AFD/ICB/CW-15/001 պայմանագրի պատվիրատու Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից: Սույն որոշման 1-ին կետով նախատեսված բյուջետային վարկի տրամադրման օր է համարվում վարկի գումարը սույն ենթակետում նշված գանձապետական հաշվին փոխանցելու օրը:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանն ընկերության վճարահաշվարկային սպասարկման համար Հայաստանի Հանրապետության գանձապետարանում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անունով բացել արտաբյուջետային հաշիվ (հաշիվներ):

4. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում «ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել բյուջետային վարկի տրամադրման պայմանագրեր՝ սույն որոշմամբ սահմանված ընդհանուր պայմաններով:

5. «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 3 հավելվածի NN 1, 1.1 և 1.1.1.1 աղյուսակներում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշման N 1 հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված կատարողական ակտերով ընկերությանը պայմանագրի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների դիմաց վճարումները պայմանագրով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքի փոխարեն իրականացնել՝ հաշվարկների հիմքում կիրառելով 1 եվրո=500 դրամ փոխարժեքը՝ վճարումներն իրականացնելով՝ համաձայն ծրագրի ֆինանսավորման համապատասխան աղբյուրների՝ վճարումներն իրականացնելով ամբողջովին Հայաստանի Հանրապետության կառավարության համաֆինանսավորման աղբյուրից:

7. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ ընկերության նկատմամբ սույն որոշման 6-րդ կետում

նշված մեղմացնող միջոցառման կիրառման նպատակով ծրագրի համար անհրաժեշտ լրացուցիչ համաֆինանսավորման միջոցները հատկացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման մեջ վերաբաշխում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

8. Առաջարկել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին՝ սույն որոշման մեջ նշված պայմանագրերում ապահովել սույն որոշումից բխող համապատասխան փոփոխություններ:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ